«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին:
ԱՌԱՐԿԱ	Անգլերեն
ՀԵՂԻՆԱԿ	Կարինե Պետրոսի Պետրոսյան
ՄԱՐԶ	Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Սիամանթոյի անվան հ. 162 հիմ. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

ԳԼՈՒԽ. 1 ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ 5

1.1 Մեթոդական միավորման կառուցվածքն ու գործառույթները 5

ԳԼՈՒԽ 2 ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ: 9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 166

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 177

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է զարգացող աշխարհում ուսուցչի առջև ծառացած նոր մարտահրավերներով, խնդիրներով ու պահանջներով, որոնց բավարարման համար շատ կարևոր է ճիշտ կազմակերպված աշխատանքը մեթոդական միավորման շրջանակներում, որտեղ ուսուցիչը կարողանում է լուծում տալ շատ խնդիրների, զարգացնում է իր մանկավարժական որակները, ձեռք է բերում բազմաթիվ նոր ու պահանջված կարողություններ:

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ, որոնցից առաջնային դերում են մեթոդական միավորումները: Դպրոցում՝ ամեն քայլափոխին, ուսուցիչը և աշակերտը բախվում են զանազան մարտահրավերների հետ, որոնք հաճախ հնարավոր են լուծել միայն սերտ համագործակցության միջոցով: Նմանատիպ խնդիրների լուծման առաջին օգնականը դպրոցում մեթոդմիավորումն է: Աշխատանքն այստեղ ուղղված է ուսուցիչների մասնագիտական որակների, մեթոդական գիտելիքների բարձրացմանը: Միավորման ներսում շատ կարևոր է յուրաքանչյուր ուսուցչի անհատական դերկատարումը: Այս օղակի արդյունավետ աշխատանքի շնորհիվ հնարավոր է ոչ միայն բարձրացնել կրթության որակը, այլև լուծել զանազան այլ խնդիրներ:

Ուսուցչի համար զարգանալու, Փորձի Փոխանակման կարևոր աղբյուր է գործընկերների հետ համագործակցումը, որն օգնում է ուսուցիչներին զարգացնել իրենց մասնագիտական կարողունակությունները: Իսկ արհեստավարժ ու բանիմաց ուսուցիչը կարողանում է հետաքրքրել սովորողին, կառավարել դասն ու սովորողների վարքը: Մեթոդական միավորումների անդամներն ուսումնական հաստատության ուսուցիչներն են, ովքեր իրենց նվիրված աշխատանքն ուղղում են ի բարրօրություն դպրոցի և սովորողների:

Հետազոտության նպատակը: Մեթոդական աշխատանքների ուսումնասիրությունը դպրոցում հետապնդում է մեկ գլխավոր նպատակ. օրինակով ցույց տալ և ապացուցել, թե համակարգված և համագործակցային աշխատանքը

յուրաքանչյուր մեթոդմիավորման ներսում որքան դրական ազդեցություն կարող է ունենալ ուսումնական հաստատության գործունեության վրա: Նմանատիպ աշխատանքով հնարավոր է ապահովել ուսուցիչ-աշակերտ կապը և բարձրացնել ուսումնառության որակը:

Հետազոտության խնդիրը: Ձևակերպել մեթոդական միավորման՝ որպես խորհրդակցական մարմնի կառուցվածքն ու հիմնական գործառույթները դպրոցում, հիմնավորել մեթոդական միավորումների անհրաժեշտությունը դպրոցում, օրինակներով ցույց տալ կատարված աշխատանքների կարևորությունն ու արդյունավետությունը:

ԳԼՈՒԽ. 1 ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

1.1 Մեթոդական միավորման կառուցվածքն ու գործառույթները

Ուսուցիչների մեթոդական աշխատանքը կազմակերպող գլխավոր կառույցը առարկայական մեթոդմիավորումն է: Այն նպաստում է ուսուցիչների մասնագիտական վարպետության, մեթոդական կուլտուրայի, ստեղծագործական ներուժի բարձրացմանը: Առարկայական մեթոդմիավորումների մեթոդական աշխատանքը կարող է ունենալ կազմակերպման հետևյալ ձևերը.[1]

- դասախոսություն
- սեմինար
- ստեղծագործական բանավեճ
- կոլեկտիվ ստեղծագործ աշխատանքի ժամ
- մեթոդական մրցույթներ
- մեթոդական վարպետության դասեր
- բանավեճեր
- որոնողա-ստեղծագործական աշխատանքներ, նախագծեր

Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքներում որոշակի կարևորություն է տրվում նաև ուսուցիչների ինքնակրթության կազմակերպմանը:

Մանկավարժական վարպետության կատարելագործման նպատակով մեթոդմիավորումը կազմում է դասերին փոխադարձ այցելությունների պլան- գրաֆիկ: Ինչպես վերը նշել էինք'մեթոդմիավորման աշխատանքում մեծ նշանակություն ունի վարպետ ուսուցչի և սկսնակ մասնագետների միջև ծավալվող գործունեությունը: Այս առումով անչափ կարևոր է յուրաքանչյուր ուսուցչի մասնագիտական որակները, Իսկ ինչ են իրենցից ենթադրում այդ որակները:

Ուսուցչի մասնագիտական որակներից են'

- հանդուրժողականությունը, սեփական աշխատանքը ծրագրելու և

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876, ՀՀ կառավարության որոշում

կազմակերպելու, ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, մասնավորապես ավանդական և ժամանակակից մեթոդները զուգորդված օգտագործելու, անվտանգ ուսումնական, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողություն;

- նորը զգալու և ընկալելու կարողություն, գենդերային անկողմնակալություն;
- քննադատական մտածելակերպ, սեփական գործունեությունը մշտապես վերլուծելու, վերանայելու, ճշգրտելու և կատարելագործելու ցանկություն և կարողություն;
- սովորողի իրավունքների պաշտպանի, երեխային համաձևավորողի, ուսումնադաստիարակչական գործընթացը երեխայի համար հեշտացնողի դերերը մասնագիտական բարձր որակով կատարելու ցանկություն և կարողություն;
- դպրոցի, դասարանի և նրանում կատարվող բոլոր իրադարձությունների և փոփոխությունների մասնակիցը լինելու պատրաստակամություն:[2]

Հոգեբանները գտել են, որ միայն այն գիտելիքներն են դառնում համոզմունք, որոնք մարդն ինքնուրույն է ձեռք բերում: Եվ եթե գիտելիքների սկզբնական ընկալումը կայուն չէ, ապա հաջորդող աշխատանքը պետք է լինի անհատական և պետք է իրագործվի այն ծավալով ու տեմպով, որ անհրաժեշտ են յուրաքանչյուր անձի: Իսկ դա հնարավոր է միայն ինքնուրույն կրթական գործունեության պայմաններում: Առավել արդյունավետ ձևով այն կազմակերպել հնարավոր է մեթոդմիավորումների նիստերի ընթացքում՝ արդյունքները ներկայացնելով տարբեր ձևերով. զեկուցումներ, բաց դասեր, ստեղծագործական հաշվետվություններ: Այս բոլորը պլանավորվում է նախապես և վերահսկվում է մեթոդմիավորման ղեկավարի կողմից: Ինչպե՞ս պետք է կազմակերպել մեթոդմիավորման աշխատանքը դպրոցում:[3] Աշխատանքային պլանում պետք է առանձնացնել հիմնական ուղղությունները, օրինակ՝ ուսուցման որակի բարձրացում, դաստիարակչական գործընթացի կատարելագործում՝ միտված երեխայի անձի զարգացմանը:

---

[2] Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»
[3] https://old-lib.armedu.am/resource/846, Պաշարների շտեմարան

Մեթոդմիավորման աշխատանքն անհրաժեշտ է կառուցել ընդհանուր մանկավարժական խնդիրների շուրջ, որն այդ պահին ծառացել է դպրոցի առջև: Ընդհանուր թեմայի քննարկման ընթացքում մեթոդմիավորման նիստերում ցանկալի է կոնկրետացնել այն: Թեմայի որոշումից հետո անհրաժեշտ է նշել դրա գործնական ելքի ձևը. ելույթներ սեմինարներում, բաց դասի ընթացքում աշխատանքի փորձի ներկայացում և այլն:

Մեթոդական աշխատանքի ժամանակակից մակարդակի ապահովման համար կրթական հաստատությունում կարևոր է կազմակերպել աշխատանք՝ ուսուցիչներին նորմատիվ փաստաթղթերի, մեթոդական և առարկայական նոր գրականության ծանոթացման ուղղությամբ: Մեթոդմիավորման նիստերում կարելի է ուշադրություն հրավիրել այն հարցերին, որոնք կապված են հանձնարարականների, հուշագրերի, ծրագրի առավել բարդ թեմաների քայլաշարի կազմմանը, առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրմանն ու տարածմանը: Անհրաժեշտ է մանկավարժական փորձին վերաբերվել զգուշությամբ ու խնամքով և հաշվետվությունների, հոդվածների տեսքով դրանք տեղադրել մեթոդական «գանձարանում»: Հնարավոր է կազմակերպել դասապլանների, ստեղծագործական աշխատանքների, զննական միջոցների, լավագույն տետրերի ցուցահանդեսներ: Մանկավարժական վարպետության կատարելագործման նպատակով մեթոդմիավորումը կազմում է դասերին փոխադարձ այցելությունների պլան-գրաֆիկ: Մեթոդմիավորման աշխատանքում մեծ նշանակություն ունի վարպետ ուսուցչի և սկսնակ մասնագետների միջև ծավալվող գործունեությունը: Մեթոդմիավորման աշխատանքի պլանավորման ընթացքում երաշխավորվում է ներառել հետևյալ հարցերը.

• Առարկայի տեսական և դասավանդման մեթոդիկայի հարցեր, հարցեր մանկավարժությունից և հոգեբանությունից (մասնագետների ելույթներ):

• Ծրագրում ընդգրկված բարդություն ներկայացնող հարցերի ուսումնասիրում և այդ կապակցությամբ մեթոդամանկավարժական գրականության իրազեկում:

• Նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրում:

• Նոր դասագրքերի ուսումնասիրում:

• Երաշխավորությունների, հուշագրերի, զննական միջոցների մշակում:

• Միջառարկայական կապերի հարցեր:

• Տետրերի ստուգման հարցեր:

• Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման և տարածման աշխատանք. սեմինարների կազմակերպում՝ գործնականության ապահովմամբ:

• Նպատակային փոխադարձ դասալսումներ, բաց դասեր:

• Ուսուցիչների դասավանդման որակի և սովորողների գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և արդյունքների քննարկում:

• Սկսնակ ուսուցիչների հետ աշխատանքի կազմակերպում:

• Քննական նյութի նախապատրաստում:

• Սեմինարներ, խորհրդակցություններ:

• Առարկայական գիտագործնական համաժողովներ:

• Ինքնակրթության վերաբերյալ ուսուցիչների հաշվետվություններ:

• Մեթոդական նյութերի և մշակումների համակարգման կազմակերպում. դասապլաններ, ցուցահանդեսներ, թեմատիկ մշակումներ, դիդակտիկ նյութեր, զննական միջոցներ, սովորողների ստեղծագործական աշխատանքներ և այլն:

• Առարկայական արտադասարանական աշխատանքներ[4]:

[4] https://old-lib.armedu.am/resource/846, Պաշարների շտեմարան

ԳԼՈՒԽ 2 ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ:

Ուսուցչի համար գործընկերների հետ համագործակցությունը խիստ կարևոր նշանակություն ունի: Օրինակելի փորձը, որը սկսնակ ուսուցիչը կարող է վերցնել ավագ ու փորձառու գործընկերներից, մեծապես նպաստում է, որպեսզի ուսուցիչն արդեն գործնականում պատկերացում կազմի այս կամ այն խնդրո առարկայի վերաբերյալ: Ուստի սովորել սովորեցնելով բանաձևն այստեղ լայն կիրառելի է:

Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, տեղեկացված են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին: Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը և հմտությունները: Ստացվում է, որ օրինակելի փորձի փոխանակումը կարող է մոտիվացնել սկսնակ, ոչ հմուտ ուսուցիչներին ամեն կերպ գտնել ճանապարհներ նոր հմտությունների ու կարողությունների ձեռքբերման համար:

Այստեղ իրականացված բազմաբովանդակ գործառույթները օգնում են ուսուցչին համակարգել իր ողջ մարդկային ներուժը, աշխատանքին մոտենալ ստեղծագործաբար, գնալ նոր ու հետաքրքիր գաղափարների որոնման ճանապարհով, ինչի արդյունքում աշխատանքը դառնում է համակարգված ու արդյունավետ: Ուսումնական գործընթացը համակարգվում է, քանի որ մի նպատակի իրագործման համար աշխատում է մանկավարժների ամբողջ մի թիմ, բացառվում է ցանկացած անհատական շահ, բոլորը գործում են 'նպատակ ունենալով համակարգել ուսումնադաստիարակչական գործընթացն ու բարձրացնել կրթության առաջնային շահակիցների' սովորողների կրթության որակը:

Կրթության որակ հասկացությունը սերտորեն առնչվում է կրթության մատչելիությանը և, չնայած սրանք երկու տարբեր հասկացություններ են, այնուամենայնիվ փոխլրացնում են միմյանց: Եթե կրթության որակը հնարավոր չէ առանց

կրթության մատչելիության, ապա մատչելիությունը իմաստազրկվում է առանց համապատասխան կրթական որակի ապահովման: Որակյալ կրթությունը միտված է ապագային և ենթադրում է ոչ միայն նախկինում առկա գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլև նոր գիտելիքների ստեղծում անհատապես կամ կոլեկտիվ եղանակով: Գիտելիքաստեղծ գործունեությունը որակյալ կրթության հիմքերից է, որը կարող է բերել գիտելիքահեն տնտեսության, ժողովրդավարական հասարակարգի զարգացման, կյանքի զարգացման նոր ուղիների ու մոդելների ստեղծման ու զարգացման:[5]

Բաց դաս: Արմավիր քաղաքի թիվ 10 հ/դ «Հումանիտար» մեթոդմիավորման անդամները ողջ ուսումնական տարվա ընթացքում ապահովվեցին սերտ համագործակցություն միմյանց հետ, որի վառ արտահայտված արդյունքներից էր նրանց կազմակերպած օրինակելի բաց դասերը, արտադասարանական միջոցառումները, էքսկուրսիաները, մեթոդական զեկույցները, մեթոդմիավորման առարկաների դրվածքի ուսումնասիրության ժամանակ ցուցաբերած ակտիվությունը, մասնակցությունը սեմինարներին, վերապատրաստումներին: Ստորև անհատապես կանդրադառնամ 2021-2022 ուսումնկան տարվա ընթացքում մեթոդմիավորման որոշ անդամների կատարած աշխատանքներին և դրանց վերլուծությանը, որը թուլլ կտա ամբողջական պատկերացում կազմել միավորման աշխատանքի մասին:

Առարկա՝ անգլերեն

Առարկա՝ Անգլերեն		Ամսաթիվ 17.05.22թ Կիսամյակ երկրորդ Դասարան IV
Աշակերտների Թիվը **20**	Աղջիկ-**7**	Տղա- **13**
Թեմա՝ **Simple Past** (անցյալ անորոշ)	Դասի բնույթը՝Անցած նյութի ամրապնդման դաս	
Օգտագործող նյութեր՝ Մեթոդներ՝	• ՏՀՏ՝ տեսանյութ,սալիկաշար • Գրավոր աշխատանքի թերթիկներ • Գրատախտակ • համակարգով'Present,Practise,Produce'The 3Ps, PPP	

Ամբողջական պատկեր՝	Արդեն սովորել են-Անցյալ անորոշ ժամանակաձևի կիրառությունը,կազմությունը ,բանալի բառերը։ Այսօր զարգացնելու են-Համագործակցային կարողությունները

Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում

Դասի նպատակը՝	• Զարգացնել բանավոր և գրավոր խոսքը
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա՝ • ճիշտ սահմանել անցյալ անորոշ ժամանակաձևը • կազմել նախադասություններ՝ օգտագործելով կանոնավոր և անկանոն բայերը • ներկայացնել անցյալ ժամակաձևի կազմությունը • Նախադասությունները դարձնել հարցական և ժխտական

Բաց դասի քննարկման ժամանակ առանձնացվեց ուսուցչի կողմից կիրառված նորագույն մեթոդներից PPP մեթոդը: Այս մեթոդի օգնությամբ ուսուցչուհին սկսեց դասապրոցեսը: Աշակերտները տեսանյութի միջոցով ծանոթացան այն հիմնական խնդիրներին, որոնք ուսուցչուհին պետք է անդրադառնար բաց դասի ժամանակ, այնուհետև կատարվեց զույգերով և խմբային աշխատանք: Մեթոդը հնարավորություն տվեց դասապրոցեսին ներգրավել բոլոր աշակերտներին, ապահովել նրանց մասնակցությունը և ակտիվությունը դասապրոցեսին: Մեթոդը առանձնակի հաջողված է նոր նյութի հաղորդման դեպքում, որը և ոսուցչուհին ապացուցեց գործնականում: Հաշվի առնելով ժամանակի պահանջները, ուսուցչուհին օգտագործել էր նաև ՏՀՏ գործիքներ՝ տեսանյութ, սահիկաշար: Աշակերտները տեսողական հիշողության միջոցով կարողացան ամբողջացնել իրեն տրված հանձնարարությունները և օգնել միմյանց:

Ուսուցչի համար բացթողում էր ժամանակի ոչ ճիշտ հաշվարկումը և բաշխումը: Բաց դասերը մեծ կարևորություն ունեն ուսումնական գործընթացում և իրենց մեջ ներառում են մոտիվացիոն տարրեր և՛ ուսուցիչների և՛ աշակերտների համար:

<u>Զեկույց:</u> Զեկույցը գիտական կամ կրթական գործունեության բազմաթիվ

տեսակներից մեկն է: Հաճախ զեկույցը կոչվում է հոդված համաժողովի կամ վերացական հոդվածի համար, բայց ամեն դեպքում դրանք բոլորը կառուցված են մոտավորապես նույն օրինաչափության համաձայն: Խնդիրն այն է, որ ոչ ոք չի ցանկանում ձանձրալի հետազոտությամբ զբաղվել, և քչերը գիտեն, թե ինչպես ճիշտ մոտենալ թեմայի ընտրությանը:

Հաճախ ուսուցիչները կամ դասավանդողները տալիս են թեմաների պատրաստի ցուցակ, որից պետք է ընտրեք այն մեկը, որն ամենից շատ եք հավանել: Եթե ունեք ընտրելու մի քանի թեմաներ, որոնք կարող եք վերցնել աշխատանքի, ապա վերցրեք այն թեման, որի հետ աշխատելը ոչ միայն ավելի հեշտ կլինի, այլև ավելի արդյունավետ:

Եթե զեկույցի թեման ընտրելու հարցում լիովին ազատ եք, ապա ավելի լավ է այն ընտրեք և ձևակերպեք ձեր ղեկավարի հետ:

Հիմնական բանը հավատալն է, որ ձեր ցանկացած հետաքրքրություն կարելի է դիտարկել գիտական տեսանկյունից, պարզապես անհրաժեշտ է դրան ճիշտ մոտենալ:

Մանկավարժական զեկույցը հիմնարար գործիք է 'ուսուցիչների կարողություններն ու կարիքները իմանալու և հարմարեցնելու համար' տարբեր կրթական մակարդակները հաղթահարելու համար[6]:

Չնայած յուրաքանչյուր կրթական կենտրոնի ուսուցիչների զեկույցների մեջ կարելի է գտնել որոշ տարբերություններ, ընդհանուր առմամբ դրանք պահպանում են ընդհանուր տարրեր, խնդիրներ, որոնք պետք է արտացոլվեն Փաստաթղթում, գտնեն լուծումներ[7]:

Իսկ այժմ անդրադառնամ «Հումանիտար» մեթոդմիավորման անդամներից Հայոց լեզու և գրականություն դասավանդող ուսուցիչներից Կ. Մ. զեկույցի թեմային և դրա կարևորությանը:

Զեկուցման թեմա՝ «Դասավանդման միջոցները»:

Գիտելիքները մարսելու համար հարկավոր է դրանք կլանել ախորժակով: Դասավանդման միջոցները մանկավարժական գործընթացը կազմակերպելու և իրականացնելու համար նախատեսված նյութական օբյեկտներն են: Դրանք գիտելիք

[6] https://hy.cultureoeuvre.com/10762739-how-to-choose-an-interesting-topic-for-your-report
[7] Մանկավարժական ռազմավարություն: Վերցված է edutechwiki.unige.ch կայքից

ստանալու աղբյուր են, հմտությունների ձևավորման միջոցներ: Դրանք ներառում են ցուցադրական գործիքներ, դասագրքեր, դիդակտիկ նյութեր, տեխնիկական միջոցներ, սարքավորումներ, պատեր, դասարաններ, լաբորատորիաներ, համակարգիչներ, հեռուստատեսության և զանգվածային հաղորդակցության այլ միջոցներ, կազմակերպչական և մանկավարժական միջոցներ (ուսումնական պլաններ, քննության տոմսեր, աշխատանքային տախտակներ եւ այլն): Պետք է նշել, որ «ուսուցման միջոցների» հայեցակարգն ավելի լայն իմաստ ունի: Այս դեպքում ուսումը նշանակում է այն ամենը, ինչը նպաստում է կրթության նպատակներին հասնելու համար՝ մի շարք ձևեր, մեթոդներ, կրթական բովանդակություն և հատուկ դիդակտիկ միջոցներ ։ Դրանց ընտրությունը կախված է կրթական գործընթացի դիդակտիկ հասկացություններից, նպատակներից, բովանդակությունից, մեթոդներից, պայմաններից և ուսուցչի պատրաստվածությունից: Գոյություն ունի դասավանդման միջոցների համակարգ, որոնց անդրադառնալով, ուսուցչուհին փորձեց վերհանել առկա խնդիրները և օգնել մեթոդմիավորման այն անդամներին, որոնք բախվել են դասավանդման միջոցների կիրառման առկա խնդիրների հետ:

Դասավանդման միջոցների համակարգ

Դասավանդման միջոցները, ինչպես նաև մեթոդները, կազմում են մանկավարժական համակարգի մի մասը և կատարում են դրա նպատակը: Ընտրված միջոցի ճշգրիտ լինելը որոշվում է դասի արդյունքից, ուսուցչի կարողություններից: Անդրադառնալով զեկուցումների թեմաներին պետք է փաստեմ, որ մեթոդմիավորման բոլոր անդամները կարողացել էին իրենց համար առանձնացնել ակտուալ և շատ մեծ պարզաբանումներ, լուծումներ պահանջող թեմաներ: Նմանատիպ թեմաների վերհանումը, դրանց քննարկումը, անդրադարձերը օգնում են և սկսնակ և երկար տարիների փորձ ունեցող ուսուցիչներին իրենց դասապրոցեսը, աշակերտների հետ փոխհարաբերությունները ճիշտ կազմակերպելու հարցում: Որտեղ, եթե ոչ դպրոցում՝ մեթոդմիավորման ամենամսյա նիստերի ժամանակ կարելի է քննարկել վերոնշյալ խնդիրները:

<u>Միջոցառում:</u> Դպրոցում աշակերտի և ուսուցչի անցկացրած ժամանակի

բաղկացուցիչ մասն են կազմում դասարանական և համադպրոցական միջոցառումները, որոնք կարողանում են վերհանել շատ կարևոր իրողություններ և մշտապես նպաստում են դպրոց – աշակերտ – ուսուցիչ կապի ամրապնդմանը:

Ուսումնական տարվա ավարտը Արմավիր քաղաքի թիվ 10 հիմնական դպրոցում նշանավորվեց իններորդ դասարանցիների և ուսուցիչների մասնակցությամբ արտադասարանական միջոցառումների կազմակերպմամբ: Առանցքային դեր խաղացին այցելությունները դեպի Եռաբլուր պանթեոն, Ծիծեռնակաբերդ և Վազգեն Սարգսյան տուն-թանգարան: Ոգևորված աշակերտները ուսուցիչների օգնությամբ որոշեցին քաղաքի մշակույթի տանը կազմակերպել «Մենք ձեզ լույս ենք պարտք» խորագրով միջոցառումը: Միջոցառման նմապատկն էր վառ պահել 44 օրյա պետերազմում զոհված, թիվ 10 հ/դ աշակերտներ Գոռ Վաղարշակյանի և Ռադիր Մանուկյանի հիշատակը: Միջոցառման ընթացքում դպրոցի աշակերտներն անհատապես հիշեցին ու ներկայացրեցին հերոս տղաների անցած ուղին, փառքն ու վաստակը հայրենիքի նկատմամբ: Միջոցառման ամենահուզիչ դրվագը հերոս Ռադիկ Մանուկյանի եղբոր, 10 – րդ դասարանի աշակերտ, Նարեկ Մանուկյանի բացման խոսքն էր, որը դարձավ խորհրդանշական և մեծ նշանակություն ունեցավ միջոցառման ողջ գաղափարը ճիշտ փոխանցելու գործում:

Միջոցառմանը ներկա էին զոհվածների ծնողները, հարազատները, համագյուղացիները, ինչպես նաև մարզային և տեղական իշխանությունների ներկայացուցիչները: Դպրոցի տնօրենի խոսքով, հերոսների հիշատակը միշտ վառ է մնալու բոլորի սրտերում: Նրանք պայքարել և իրենց կյանքը չեն խնայել հանուն վաղվա գեղեցիկ ապագայի և բարօրության, այդ պատճառով պետք է սերունդները ջանք ու եռանդ չխնայեն հերոսների սխրանքներն ու փառքի ճանապարհը գնահատելու, պահելու և արարեցնելու համար: Դպրոցի սաները պետք է ջանան արժանի հետնորդներ լինել քաջարի զինվորներին և հետագայում արդարացնել նրանց հույսերն ու ապացուցել, որ հերոսի կյանքի գինը ամենամեծն էր պետության ու պետականության զարգացման գործում:

Հումանիտար մեթոդմիավորման առարկաների դրվածքի ուսումնասիրություն դպրոցում:

Հումանիտար մեթոդմիավորման ուսուցիչների համագործակցված աշխատանքը ցայտուն երևաց մասնախմբի դրվածքի ուսումնասիրության ժամանակ: Ուսուցիչները ոչ միայն կարողացան ապահովվել դասապրոցեսի արդյունավետությունը, այլև տոնի վերածեցին դպրոցի բոլոր երկար դասամիջոցները: Պատմության ուսուցչուհի Ա. Մ-ը կազմակերպեց հիշատակի և ոգեկոչման միջոցառում նվիրված ցեղասպանության զոհերի հիշատակին: 7-րդ դասարանի աշակերտները կարողացան իրենց հարգանքի տուրքը մատուցել ցեղասպանության զոհերի հիշատակին՝ կատարելով պատմական ակնարկ և Զարթիր Լաո երգը[8]: Միջոցառումների շարքը շարունակեցին անգլերենի և ռուսաց լեզվի ուսուցչուհիները , որոնք ոչ միայն լույս ընծայեցին անգլերեն լեզվով գիրք և պաստառ, այլև կարողացան դպրոցում բացել ռուս դասականների անկյուն:

[8] https://www.youtube.com/watch?v=K98EVPFrxMQ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կրթությունն ուղղված է սովորողների մտածողության, մասնագիտական ինքնակրթության, ինքնուրույնության զարգացմանը, ինչը շատ կարևոր է նոր աշխարհում: Հետևաբար ուսուցչի մասնագիտական կարողունակությունների զարգացումն արդի կրթական պահանջների հիմքն է: Ուստի դպրոցի համար կարևոր է կարողունակ ուսուցիչ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները:

Մեր ուսումնասիրության արդյունքում փաստեցինք, որ ուսուցչի մասնագիտական որակների բարձրացման համար շատ կարևոր է գործընկերների հետ համագործակցությունը առարկայական մասնախմբերի աշխատանքների շրջանակներում: Այդ աշխատանքների ճիշտ կազմակերպման արդյունքների մասին խոսեցինք փաստերով: Սակայն պետք է նաև նշել, որ եղել են խնդիրներ, որոնք հաղթահարվել են մասամբ: Կարևորում եմ հատկապես զեկույցների թեմաների արդիականացումը, որը կարող է օգնել մեթոդմիավորման բոլոր անդամներին անկախ փորձառությունից: Իրական և ճիշտ կազմակերպված դասալսումները, որոնց անաչառ քննարկումը կարող է լինել մեծ խթան ուսուցչի համար: Ուսումնական պրոցեսի արդյունավետության համար մեծ արժեք են ներկայացնում մեթոդական և առարկայան սեմինարիների մասնակցության շարունակականությունը և փորձի փոխանակումը գործընկերի հետ:

Անհրաժեշտ ենք համարում վերահաստատել մեր այն պնդումը, որ առարկայական մեթոդական միավորումներում համակարգված աշխատանքը բարձր ու նոր որակի ուսումնական գործընթաց է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876, ՀՀ կառավարության որոշում

2. https://old-lib.armedu.am/resource/846, Պաշարների շտեմարան https://hy.cultureoeuvre.com/10762739-how-to-choose-an-interesting-topic-for-your- report

3. Մանկավարժական ռազմավարություն: Վերցված է edutechwiki.unige.ch կայքից https://www.youtube.com/watch?v=K98EVPFrxMQ

4. education01.08.2017.pdf Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում:

5. Ա. ԹոՓուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»